Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՄԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լուսանկարում պատկերված են Հրաչյա Ներսիսյանը, ռեժիսոր Լևոն Գրիգորյանը, դերասան Նորայր Գևորգյանը և տողերիս գրողը: Ներսիսյանի հետ կապված թանկագին այս մասունքը հետաքրքրաշարժ մի պատմությունի ունի:

1956 թվականի դեկտեմբերի 29-ի առավոտն էր, երբ «Հայֆիլմ» կինոստուդիայում հանդիպեցի Ներսիսյանին: Սրտնեղած էր: Քիչ-քիչ պարզվեց եղելությունը. սահմանապահները դերասանին հրավիրել էին իրենց մոտ, հատկապես նրա պատվին կազմակերպված հանդիպմանը:

- Իսկ այդտեղ սրտնեղելու ի՞նչ կա, – վրա տվեցի ես, – կհանդիպեք զինվորների ու սպաների հետ, մի քիչ կխոսեք...

Ներսիսյանը կարծես առիթի էր սպասում.

- Է՛, ջանըմ, ես խոսո՞ղ եմ, – ժայթքեց նա, – իմ խոսելը որևէ տեղ տեսած կա՞ս: Չկա՛ս, որովհետև ես խոսել չեմ կարողանում, խոսել չգիտեմ: Ես ի՞նչ ասեմ զինվորներին:

- Դե, կասեք, – արդեն ավելի զգույշ շարունակեցի ես, – կասեք՝ թանկագին սահմանապահներ, ընդունեք, խնդրում եմ, իմ ջերմ ողջույնները: Դուք վեհ ու ազնիվ գործ եք կատարում, պաշտպանում եք մեր սրբազան հայրենիքի սահմանները, որովհետև...

Ես շփոթված կանգ առա: Կանգ առա, որովհետև նկատեցի, որ Ներսիսյանը մի տեսակ զարմանքով նայում է երեսիս:

- Էսիր, ի՛նչ լավ ես խոսում, – ասաց նա, – որտեղի՞ց գիտես այդպես խոսել, ամեն բառը տեղը տեղին, ճիշտ-ճիշտ: Դու... նախապես անգի՞ր էիր արել:

Մենք ծիծաղեցինք:

- Դե, հիմա, – Ներսիսյանը փութով տեղավորվեց կողքիս, – մի քանի անգամ նորից կրկնիր ասածդ, որ ես սովորեմ: Հա՛յդե:

- Վարպետ, – ծիծաղս հազիվ զսպելով ասացի, – մի՞թե դուք կարծում եք, որ ես ոտանավոր եմ արտասանում, որ կարողանամ ամեն անգամ նույն բառերով...

- Հա՛յդե, մանչս, – կես կատակ, կես հորդոր ձայրը բարձրացրեց Ներսիսյանը, – գնացի՛նք։

Լևոն Գրիգորյանի և Նորայր Գևորգյանի ժպիտների ներքո ես նորից սկսեցի կրկնել «դասը», սակայն մեկ-երկու նախադասություն լսելուց-կրկնելուց հետո Ներսիսյանն ընդոստ վեր կացավ։

- Չէ, չի լինի, գլուխ չունեմ, բաբամ, հիմա նոր նստեմ ու դեր սովորեմ, – նա իր նյարդային քայլվածքով գնաց-եկավ սենյակում, – գտա, – դերասանը պայծառացած դեմքով շեշտակի մոտեցավ ինձ, – այսպես կանենք։ Միասին կգնանք, ես կնստեմ բեմի վրա, իսկ դու ելույթ կունենաս, եղա՞վ։

- Ախր, Վարպե՛տ, ինչպե՞ս թե ելույթ ունենամ։ Զինվորականները ձեզ հետ են ցանկանում հանդիպել, որ ձեր խոսքը լսեն, նրանք, անկասկած, ձեզ հարցեր կտան, վերջում դուք պետք է ելույթ ունենաք...

- Դե, ուրեմն, չեմ գնա։ Ես խոսել չգիտեմ, հարցերին պատասխանել՝ բոլորովին չգիտեմ։ Իսկ վերջում ելույթ ունենալ... այդ էր պակաս։

Բայց քանի որ սահմանապահների հետ նախնական պայմանավորվածությունն արդեն եղել էր և չգնալը նշանակում էր ձախողել նրանց նախաձեռնությունը, Լևոն Գրիգորյանը, Նորայր Գևորգյանն ու ես գործողությունների պլան մշակեցինք։ Որոշեցինք, որ այնտեղ ես կներկայացնեմ Հրաչյա Ներսիսյանին, կխոսեմ դերասանի գործի ու գործունեության մասին և կաշխատեմ այնպես անել, որ դրանով էլ ամեն ինչ վերջանա։

- Եթե հարցեր լինեն՝ հում-եփ կպատասխանեմ, – եզրափակեց Ներսիսյանը։

Տեղ հասանք իրենց՝ սահմանապահների ուղարկած մեքենայով։ Ընդարձակ, լուսավոր դահլիճը լեփ-լեցուն էր։ Մեզ դիմավորեցին ծափահարություններով, առաջնորդեցին, նստեցրին ամենաաչքի ընկնող տեղում և...

Եվ հենց այստեղ, բեմի վրա, հանդիպման արարողությունն սկսվելուց բառացիորեն մի քանի րոպե առաջ պարզվեց, որ թե՛ իմ ելույթը, և թե՛ Ներսիսյանի խոսքը պետք է լինի ռուսերեն։ Ես վատ զգացի, որովհետև լավ գիտեի, որ Ներսիսյանը այնքան լավ չի տիրապետում ռուսերենին։

Ամբիոնի մոտ կանգնած, լավ-վատ խոսեցի Ներսիսյան-դերասանի մասին, բայց նույնիսկ ելույթիս ժամանակ ուշքս նրա կողմն էր։ Հիմա նա ի՞նչ է անելու։

Եվ հեշտությամբ կարելի է պատկերացնել իմ զարմանքը, երբ ես, խոսքս ավարտած-չավարտած, տեսա, որ դերասանը կտրուկ ոտքի ելավ և մոտեցավ ամբիոնին։

- Սիրելի բարեկամներ, – սկսեց նա իր առոգանաշատ ռուսերենով, – ի մեծ ամոթ ինձ, ես չգիտեմ ռուսական հմայիչ լեզուն, բայց, – նա մի պահ կանգ առավ, – ոչի՛նչ, կսովորեմ։

Դահլիճը համերաշխության աղմուկով ընդունեց այս խոստովանությունը։

Ներսիսյանը մի կողմ թողեց ամբիոնը, իրեն նայողներին ամբողջ հասակով երևալու համար, արտահայտիչ մի քանի շարժումներով լռություն ապահովեց դահլիճում և սկսեց...

Շարունակությունը հրաշալի մի խաղ էր, անզուգական, անկրկնելի, միայն ներսիսյանական մի խաղ, որը մինչև այսօր չի մոռացվում։ Կես հայերենով, կես ռուսերենով, հաճախ առանց բառերի, միայն դիմախաղով ու շարժումներով նա սկսեց պատմել, թե ինչպիսի հրաշք է Ադրիատիկ ծովը, մանավանդ երեկոյան պահերին, երբ արևի ճառագայթները կողքից են ընկնում ջրի մակերևույթին։ Իսկ նավավարները դուրս են գալիս բաց ծով, և նրա լուսավոր մակերևույթի վրա հեռու-հեռվից տարածվում է երգը։ Ապա ասաց, որ իր կյանքը և մանավանդ մանկությունը երջանիկ չի անցել և ինքը միտք էլ չուներ դերասան դառնալու, բայց հետո՛... ինքը շատ դերեր է խաղացել, բայց

ամենալավ դերն այն է, որը դեռ չի խաղացել, որովհետև դերասանը երբեք չպետք է կարծի, որ արդեն խաղացել է իր ամենակատարյալ դերը...

Կլանված նայում էի այս տարօրինակ, այս զարմանահրաշ խաղ-ելույթը։ Կլանված նայում էր ամբողջ դահլիճը մեծ դերասանին, որն իր տարերքի մեջ էր, այս բառի լայն իմաստով, նայում էր ակնդետ, որովհետև ներքին բնազդով բոլորն էլ զգում էին, որ ականատես, ականջալուր են բացառիկ մի խոսք-խաղի, որի նմանը այլևս չի կրկնվելու։

Եվ զարմանալի չէր, որ երբ Ներսիսյանն ավարտեց, դահլիճում շռնդալից օվացիա բարձրացավ։

... ՈՒրախ-զվարթ վերադարձանք կինոստուդիա, ուր անհամբեր մեզ էին սպասում Լևոն Գրիգորյանն ու Նորայր Գևորգյանը։ Հիացական երանգներով պատմեցի ու վերապատմեցի եղածը, և հենց տեղնուտեղը որոշեցինք «անմահացնել» այդ օրը։

Ավանգարդ, 1975, № 143, նոյեմբերի 30